

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1) մասնակցություն բյուջետային գործընթացին, տվյալների հավաքագրմանը, մշակմանը, ամփոփմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, հաշվետվությունների ներկայացմանը, աուդիտորական հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների մասով գործողությունների ծրագրի իրականացմանը.

2) մասնակցություն ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակմանը, գնահատմանը, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի մասին տվյալների հավաքմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը.

3) մասնակցություն նոր վարձատրության համակարգի անցմամբ պայմանավորված Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի և կոմպետենցիաների հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկմանը, փոխանցմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը.

4) մասնակցություն ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների, աշխատողների աշխատավարձերի և զբաղվածության, ավիաընկերությունների կատարած թռիչքների և փոխադրած ուղևորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ ցուցանիշների ամփոփմանը, հաշվետվությունների կազմմանը և համապատասխան պետական մարմիններ ներկայացմանը.

5) առևտրային օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին (օդանավ շահագործողներին) հավաստագրերի և օդանավ շահագործողի վկայականի տրման, վերասերտիֆիկացման շրջանակներում շարունակական, հուսալի և ապահով առևտրային օդային փոխադրումների իրականացման նպատակով հայտերի, բիզնես ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների վերլուծման իրականացում և մոդելավորում, դրա արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների, հիմնավորումների, պարզաբանումների պահանջում, քննարկումների կազմակերպում, վերահսկողական ժամանակացույցերի կազմում.

6) ԻԿԱՕ-ի Պետությունների գործողությունների ազգային ծրագրի (State action plan) շրջանակներում իրականացվող աշխատանքների կատարում, ներկայացված նյութերի ուսումնասիրում, կոնտակտային անձին (Focal point) ներկայացնելը, պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացնելու ապահովում.

7) Եվրոկոնսորցի Կենտրոնական քարտուղարության (DG/SEC) Երթուղու վճարների ընդլայնված հանձնաժողովի և ուսումնասիրությունների խմբի կողմից ստացվող տեղեկատվության, նյութերի ու փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծում, կոնտակտային

անձին (Focal point) ներկայացնելը և պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացնելու ապահովում:

8) Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծում և դիրքորոշում ներկայացնելը:

9) ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրում, մշակում և վերլուծում, դրանք կոնտակտային անձին (Focal point) ներկայացնելը, ավիաընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության ամփոփում և համապատասխան տվյալների բազա դրա մուտքագրման ապահովում:

Փորձագետը ներգրավվում է 3 (երեք) ամիս ժամկետով:

Փորձագետը պարտավորվում է՝

1. բարեխղճորեն կատարել իր հետ կնքվող պայմանագրով ստանձնելիք աշխատանքները,
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված իր կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվությունները, իրավական ակտերի նախագծերը, առաջարկությունները, եզրակացությունները և այլ փաստաթղթեր,
3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,
5. իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն.
- առնվազն 1 (մեկ) տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 6 (վեց) ամիսը՝ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում.
- մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ կտա օգտվել համապատասխան միջազգային կառույցների կայքերից և հրապարակված փաստաթղթերից, ինչպես նաև աշխատել տվյալների բազաների հետ և ապահովել համապատասխան գրագրությունները.
- համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Փորձագետի պաշտոնին ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով՝

1. պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է ծառայությունը կարգապահական տույժ կիրառելու հետևանքով,

2. չի անցել օրենքով սահմանված փորձաշրջանը,
3. օրենքի խախտմամբ նշանակվել է պաշտոնի,
4. չի պահպանել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները,
5. դադարեցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
6. ենթարկվել է ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք,
7. երկու տարի անընդմեջ իր մեղքով չի ստացել վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտներ:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, Կոմիտեի վարչական շենք:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), վկայականի (վկայականների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից)) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը,
- ինքնակենսագրություն (ձևը կցվում է),
- անձնական թերթիկ (ձևը կցվում է).
- հայտարարություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի թիվ 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է):

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 17.15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 21 նոյեմբեր, 2024թ.:

Փորձագետի ընտրությունը կատարվելու է փաստաթղթերի և ինքնակենսագրությունների ուսումնասիրության եղանակով:

Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղար

պարոնին
քաղաքացի _____ -ից
(անունը, ազգանունը)

_____ հեռախոսահամարը
_____ էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) պատճեն _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) պատճեն _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) պատճեն _____ էջ.
5. Ինքնակենսագրություն _____ էջ.
6. Անձնական թերթիկ _____ էջ.
7. Հայտարարություն _____ էջ.
8. Այլ _____ էջ,
_____ էջ,
_____ էջ,
_____ էջ:

Լուսանկար՝ մեկ հատ:

Առդիր՝ _____ էջ և մեկ լուսանկար:

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ (դիմումը ներկայացնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ սահմանված կարգի 13-րդ կետով՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել եմ կամ վերջին մեկ տարվա ընթացքում իմ ծառայությունը դադարեցվել է՝

- Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)
- Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)
- Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)
- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)
- Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք _____
(այո, ոչ)
- Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)


Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

(լրացնողի ստորագրությունը, անունը, ազգանունը)

«.....»24թ.

Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

1. Ազգանունը -----
 2. Անունը ----- Հայրանունը -----
 2. Սեռը -----
 3. Ծննդյան ամսաթիվը -----
 4. Ծննդյան վայրը -----
- (մարզը, քաղաքը, գյուղը)
5. Քաղաքացիությունը -----
 6. Կրթությունը -----



N	Ուսումնական հաստատությունը		Ֆակուլտետի կամ բաժանմունքի անվանումը	Ընդունվելու տարին	Ավարտելու տարին	Մասնագիտությունը	Ինչ որակավորում է ստացել ուսումնական հաստատությունն ավարտելով	Դիպլոմի կամ վկայականի համարը
	Անվանումը	Վայրը						

7. Ինչ օտար լեզուների է տիրապետում -----

(կարդում և կարող է բացատրվել, տիրապետում է ազատ)

8. Գիտական աստիճանը, գիտական կոչումը -----

9. Ինչպիսի գիտական աշխատություններ և գյուտեր ունի -----

10. Կատարած աշխատանքը աշխատանքային գործունեության սկզբից (ներառյալ ուսումը բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, զինվորական ծառայությունը և աշխատանքը համատեղությամբ)

11. Պետական պարգևներ և մրցանակներ -----

(երբ և ինչով է պարգևատրվել)

12. Առնչությունը զինվորական ծառայության հետ -----

Զինվորական կոչումը -----

Կազմը -----

(հրամանատարական, քաղաքական, վարչական, տեխնիկական և այլն)

Զորքի տեսակը -----

13. Ընտանեկան դրությունն անձնական թերթիկը լրացնելու պահին -----

(թվարկել ընտանիքի անդամներին՝ ծնողներ, ամուսին (կին), երեխաներ՝ նշելով նրանց ծննդյան ամսաթվերը)

14. Բնակության վայրը -----

15. Հաշվառման վայրը -----

(լրացվում է, եթե տարբերվում է բնակության վայրից)

16. Բնակարանային, աշխատանքային, բջջային հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն -----

17. Անձնագիրը կամ նույնականացման քարտը -----

(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

2024թ. «.....» «.....»

(անձնական ստորագրությունը)

Անձնական թերթիկը լրացնողը պարտավոր է հետագա բոլոր փոփոխությունների մասին հայտնել համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը